Ուխտերով կապված

Ուխտերը կապում են մեզ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ: Մեր ուխտերը պահելով՝ մենք կարող ենք երկնային օգնություն և ուժ ստանալ: Նախագահ Նելսոնն ուսուցանել է. «Երբ ես և դուք ուխտ ենք կապում Աստծո հետ, Նրա հետ մեր հարաբերությունները շատ ավելի սերտ են դառնում: . . . [Նրա] հետ ունեցած մեր ուխտի շնորհիվ Նա չի դադարի օգնել մեզ»:*

* «Հավիտենական ուխտը», *Լիահոնա*, հոկտ. 2022, 6:

Օղակներով մի շղթա կազմեք, որը կհիշեցնի ձեզ ձեր մկրտության ուխտի մասին: Ապա ամրացրեք այն մի այնպիսի տեղ, որ հաճախ տեսնեք:

1. Կտրեք վեց թղթի շերտ՝ մոտ 1 մատնաչափ (2,5 սմ) լայնությամբ և 8 մատնաչափ (20 սմ) երկարությամբ:
2. Յուրաքանչյուր շերտի վրա գրեք, թե ինչպես կարող եք պահել ձեր մկրտության ուխտը: (Ստորև տրված գաղափարները կարող են օգնել:)
3. Վերցրեք առաջին շերտը և ամրացրեք ծայրերը միասին, որպեսզի օղակ պատրաստեք: Այնուհետև հաջորդ շերտը անցկացրեք օղակի միջով և ամրացրեք դրա ծայրերը: Շարունակեք ավելացնել օղակները՝ մինչև ստանաք շղթա:

ՆԿԱՐԸ՝ ԲԵՏԻ ԴՈՒՐԻԼԻ

Միշտ հիշել Հիսուս Քրիստոսին
(տես Վարդապետություն և Ուխտեր 20.77, 79)

Ծառայել Աստծուն և պահել պատվիրանները
(տես Մոսիա 18.10 և Վարդապետություն և Ուխտեր 20.77)

Վկայել Հիսուս Քրիստոսի մասին և օրինակ լինել
(տես Մոսիա 18.9 և Վարդապետություն և Ուխտեր 20.77, 79)

Օգնել ուրիշներին
(տես Մոսիա 18.8-9)